թասպանները, ծունկերի վրայ չարուած ձեռքերը, չուած աչքերը) գլորուեցան անդունդ:

Ցարիզմը փոշիացաւ:

Մինչ հարբած զինուորները, պարզ հաճոյքի համար, քաղաքի թաղամասերն էին այրում, մինչ թուրք բանակը թնդանօթները ուղղում էր հինաւուրց եկեղեցիների վրայ, մինչ ժողովուրդը, ահ ու սարսափի մատնուած, խենթացած աչխարհների նման, մղոններ էր անցնում իր թշուառութիւնը ցանելով, արիւնի եւ բոցի այս աչխարհում ազգային նոր իշխանութեան երկունքն էր կատարւում:

Ռուսաց եկեղեցու ոսկեզօծ սոխերը ապշել էին Արարատեան դաշտի առջեւ: Քահանան եւ դպիրը սարսափահար սողոսկում էին խաչի շուրջը, եւ Բիւզանդիոնը մահազանգ էր հնչեցնում պատերի դեղնած սրբերի ականջին:

Թոնիրների մէջ հացերը այրուեցին: Աղի դրած մսերը փչացան, մեղրը թթուեց, եւ երեւացին, ակռաները կրճտելով, ցուլը առաւ եւ բարձրացաւ լեռը, ձիւների մէջ իր վախը թաղելու համար:

Տները շարժուեցին, փուլ եկան, եւ մարդիկ, երկրաշարժը նախազգացող տաւարների նման, իրենց գլուխը պատերին զարկին:

Կաթողիկոսը նայում էր Էջմիածնի լճի շուրջը այրուող անտառին եւ դրարար ողբ ասում, մինչ վարդապետները աղօթքների բառեր էին ծամծմում, փչացած ծամօնի նման:

Խանութների մէջ ողբալի ձկեր էին կախուած՝ մօտակայ հրդեհների բոցերի տակ կիսաեփ, եւ նախկին հարուստները ծխախոտի կտորներ էին ժողովում ու արագօրէն տուն տանում՝ ծուխի մէջ իրենց ոխը թարմացնելու համար:

Կեանքը թւում էր սոսկալիօրէն անիրական: Ամէն ինչ խոշորացոյցի տակ էր ապրում: Նախախնամութիւնը վայրենիացած հսկայ շունի էր նմանում, որի ակռաների տակ մարդիկ իրենց մսերի արիւնալի կտորներն էին թողնում:

Խենէշութիւնը պարում էր հրապարակների վրայ:

Եւ ինչպէս միշտ, հայ ժողովուրդը իր չարչարուած մարմնին՝ սին երազների հեղուկ էր սրսկում եւ լեռների ետեւից երեւակայական օգնութեան սպասում:

Մինչդեռ, շրջապատող բոլոր ժողովուրդները դաւում էին իր դէմ:

Արարատեան դաշտի չորս կողմը դիծ էին քաշել, ասես ժանտախտով վարակուած վայր լինէր:

Վրաստանը արգիլում էր հացի առաքումը:

Բաղուի թուրքերը աւազակների խմբեր էին ղրկում՝ դիակները կողոպտելու համար:

Տաճիկները քանդում էին քանդուած Անին եւ այրում Ալեքսանդրապոլը:

Կաթողիկոսը լաց էր լինում:

Հոխոսիմէի եկեղեցին մորթուած գառնուկի աչքերով նայում էր հրեշտակներին, մինչ պարոն Զինովիեվը համիսլամական ժողովի մէջ դարերի միջից իր հայրենակից Տերտուղիանոսի երեսին արիւնալի թուք էր թքնում:

Հայաստանը, լեռներից իջած գայլերի հետ ոռնում էր:

* * *

Այսօր, ես էլ եկել եմ:

Նայում եմ յետ: Ճամբաս օձապտոյտ անցնում է Կոմօյի լճի ափերից Ֆիօրենցիա, Վենետիկ, Պոլիս: Ամբողջ Եւրոպան ափիս մէջ ոսկի փոշի է: Լոյսերը աղաւաղուած են, եւ միտքս կանգ է առել ջերմաչափի կատարին:

Մենք փնտռել ենք հայրենիքը, ինչպէս թիթեռնիկը փնտռում է ճրագը, որի վրայ պիտի այրուի:

Ձկա՛յ ողբերգութիւն աւելի մեծ, քան մեր ողբերգութիւնը:

Հայաստա՜ն, Հայաստա՜ն...

* **

Սահմաններից հեռու, լեռների ետեւին, ծովերից այն կողմը, դէպի հիւսիս, դէպի հարաւ, Ափրիկէի ծոցին, Ամերիկայում, աչխարհը մրրիկի է մատնուած: Երկրաչափական ձեւերը փշրուած են, ու բոլոր գծերը իրենց դունչը երկարում են դէպի անյայտը:

Եւրոպան — երազային Ֆիօրենցիան եւ Վենետիկը եւ դաժան Լոնտրան, Փարիզը, Բերլինը հրաբուխների մօտ ցորեն է ցանում: Ամէն ինչ փշրուում է, ամէն ինչ անդունդն է նայում ու մղձաւանջային նախազգացումների մարակի տակ տառապում:

Հայաստանը խուլ ճիզ է, որին վարժ է մարդկութիւնը:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան